Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 23.6/[68291]-11

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5-ԻՆ ԺԱՄԸ 14:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

Խորհրդի անդամներ ՝

Ա. Գևորգյան	ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար
Տ. Դավթյան	ՀՀ էկոնոմիկայի նախարար
Մ. Վարդանյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարար
Ե. Զախարյան	ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ
Հ. Բեգլարյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի առաջին տեղակալ

Հրավիրվածներ ՝

Հ. Նաղդալյան	ՀՀ ԱԺ-ի պատգամավոր
Ա. Նռանյան	ՀՀ ԱԺ-ի պատգամավոր
Ա. Մարտիրոսյան	ՀՀ ԱԺ-ի պատգամավոր
Վ. Խուրշուդյան	ՀՀ ԱԺ-ի պատգամավոր
Դ. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Պ. Սաֆարյան	ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալ
Կ. Մինասյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ
Ա. Օրբելյան	ՀՀ արդարադատության նախարար
Հ. Մկրտչյան	ՀՀ վարչապետի օգնական
Խ. Ավալյան	ՀՀ վարչապետի օգնական
Վ. Նիկոյան	ՀՀ վարչապետի օգնական

Լ. Հունանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ
Ռ. Վարդանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետի տեղակալ
Վ. Կտիկյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի խորհրդական
Ա. Կարախանյան	«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար
Է. Ավետյան	ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական կառավարման կենտրոն» պետական հիմնարկի տնօրեն
Ջ. Ֆրիզեր	«Egis Bceom International» թիմի ղեկավար
Ա. Բարսեղյան	ԱԶԲ-ի ներկայացուցիչը Հայաստանում
Ս. Մելիք-Յոլչյան	«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի բաժնի պետ
Լ. Վարդանյան	թարգմանչուհի

1. Ծրագրի կառավարման խորհրդատուի տեխնիկական առաջադրանքի նախագծի հաստատում

(Ա. Կարախանյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հաստատել Ծրագրի կառավարման խորհրդատուի տեխնիկական առաջադրանքի նախագիծը (համաձայն հայերեն և անգլերեն հավելվածների).

2) հանձնարարել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Կարախանյանին՝

ա. հայտարարել խորհրդատուի ընտրության մրցույթ և դրա մասին մեկշաբաթյա ժամկետում տեղեկացնել ՀՀ կառավարության աշխատակազմ,

բ. մինչև կարճ ցուցակի կազմումը՝ ԱԶԲ-ի հետ համատեղ քննարկել տեխնիկական և ֆինանսական առաջադրանքների (նաև պայմանագրի) նախագծերը՝ հստակեցնելով բոլոր կետերը:

2. Տրանշ 1-ի /լոտ 1/ Երևան-Աշտարակ /11.7 կմ/, և Երևան-Արարատ /38 կմ/ քննարկում, նախագծերի վերջնական պատրաստման վերջնաժամկետների սահմանում

(Ա. Կարախանյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Մ. Վարդանյանին՝ 10-օրյա ժամկետում ԱԶԲ-ի հետ համատեղ քննարկել Երևան-Արարատ (38 կմ) ճանապարհի հատվածի տեխնիկական լուծման հնարավոր տարբերակները և ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնել վերջնական նախագիծ:

3. Տրանշ 2-ի /լոտ 2/ Աշտարակ-Թալին /41.3 կմ/ վերջնական մանրամասն նախագծի ներկայացում

(Ջ. Ֆրիզեր, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Կարախանյանին՝ համագործակցելով «Egis Bceom International» թիմի ղեկավար Ջ. Ֆրիզերի հետ՝ ապահովել պայմանագրով նախատեսված ժամկետներում նախագծերի կազմումն ու ներկայացումը՝ մինչև 2011 թվականի ապրիլի 30-ը:

4. Տրանշ 2-ի /Աշտարակ-Թալին 41.3 կմ, լոտ 2/ համար հողի օտարման վերջնական ծրագրի նախապատրաստման և ներկայացման ժամկետների սահմանում

(Ա. Կարախանյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Մ. Վարդանյանին՝ մինչև 2011 թվականի հուլիսի վերջին տասնօրյակը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնել Աշտարակ-Թալին ճանապարհահատվածի տարաբնակեցման ու հողերի օտարման ծրագիր:

5. «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի ամփոփ բյուջեի և պահպանման ծախսերի նախահաշվի հաստատում

(Ա. Կարախանյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հաստատել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի ամփոփ բյուջեի և պահպանման ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ